

տեղի համարեր, այլ կասկածեր նա ի տեսլենեն՝ զոր ետես, եթե ընդէ՛ր բնաւ ի նմանէ այնպիսի զաւակ անպիտան ծնանիցի: 15 Քանզի ոչ երկրաւոր զաւակի ցանկացեալ էր, այլ այնպիսումն՝ որ ի սպասաւորութիւն սպասու¹ պաշտաման ծառայութեան Տեառն Աստուծոյ կացցեն: 16 Եւ զամենայն իսկ զերկրաւորս առ ոչինչ համարեալ, ոչ լաւ համարեցաւ զանցաւորս՝ այլ զվերինն. երկնակեաց կենացն ցանկացեալ հայեր: 17 Լաւ համարեր զծառայելն միայն Քրիստոսի՝ անձին փառս համարեր. ոչ ինչ ածեր ընդ միտ զսեր թագաւորին կամ ի նմանէ կուսէ զպատուեալն, կամ զմեծութիւն, կամ զնդանութիւն փեսայութեան թագաւորին, այլ յայնմ ամենայնէ ուրացեալ հրաժարեր, եւ աւտարոտիս եւ գարշելիս եւ պատրանս համարեր: 18 Եւ յետ առաջնոյն այլ ոչ եւս խաբեցաւ երբէք ուրեք իբրեւ զմանուկ. այլ հայրական միտս զծերական հանճարոյն ստացեալ, զխրատն իմաստութեան անմահութեան: 19 Լաւ համարեցաւ զնախատինսն Քրիստոսի, քան զմեծութիւն թագաւորացն. զճգունս վարուց ընդրեալ անձին իւրոյ, յերկոտասանամենից եւ ի վեր առաքինանայր: 20 Որ իւրոյ հարցն նմանեալ, եւ զեղբարն իւրոյ Գրիգորի² զաւրինակ բերեր անձին իւրոյ. զքրիստոսեան լուծն առանց ամենայն յապաղութեան ձգեր մինչեւ ի վաղջան:

21 Բայց վասն զի թշնամանացեալ էր տուն թագաւորին ընդ նմա, եւ մինչ դեռ վասն այնորիկ զգուէին զնա աներք նորա, մեռաւ կին նորա. ազատեալ լինէր Յուսիկ ի յաներոյն³: 22 Եւ մինչ նա հոգացեալ վասն իւր ծննդոց մնացելոց զաւակին, եւ վասն այսորիկ հոգալով կայր յաղաւթս առ Տէր, եւ երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն ի տեսլեանն, եւ ասէ ցնա. Յուսիկ, որդի Գրիգորի, մի՛ երկնչիր. զի լուաւ Տէր աղաւթից քոց, եւ ահա ծնցի ի քո զաւակացոյ այլ զաւակք: 23 Չի լիցին նոքա ի լուսաւորութիւն գիտութեան, եւ աղբերք հոգեւոր իմաստութեան Հայաստան աշխարհիս: 24 Եւ ի նոցանէ բղխեսցեն շնորհք պատուիրանացն Աստուծոյ. եւ խաղաղութիւն բազում եւ շինութիւն եւ հաստատութիւն բազում եկեղեցեաց ի Տեառնէ նոցա տացի, բազում յաղթութեամբ եւ մեծաւ զաւրութեամբ. եւ բազում մոլորեալք⁴ դարձցին ի ճանապարհս ճշմարտութեան. որով եւ Քրիստոս բազում լեզուաւք փառաւորեսցի նոքաւք: 25 Որք սիւնք եկեղեցեաց լինիցին, եւ մատակարարք բանին կենաց, եւ հիմունք հաւատոց. պաշտանետայք Քրիստոսի եւ արբանեակք Հոգւոյն Սրբոյ. զի ուստի հիմն իցէ շինուածոյն, եւ կատարն անտի լինիցի: 26 Եւ բազում տուննք պտղաբերք եւ շայեկանք եւ աւգտակարք ի հոգեւոր

1 *Միւս օրինակն չունի՝ սպասու*

2 *Միւս օրինակն՝ Գրիգորիսի*

3 *Յօրինակի միում՝ ի բաներոյն*

4 *Յօր. մոլեալք*